

մէկուն մէջ յոտնկայս, միւսին մէջ աւելի ծնրադիր, բերանարաց, կ'ընդունի կրակը: Այս պատկերին երկու եզերքները կան զոյգ զոյգ մարդարէներու նկարները, իւրաքանչիւրը առանձին սիւնադարձ կամարի մը մէջ, որու ստորեւ զրուած է մարդարէին անունը. ընդամէնը 24 նըկար, հետեւեալ կարգով. կեդրոնական պատկերին ձախակողմը կան չորս զոյգ նկարներ. Մովսէս եւ Յեսուս, Յոր եւ Սամուէլ, Նաթան եւ Դաւիթ, Եղիա եւ Եղիսէ: Ձախին, կան Ուսէէ եւ Ամոյս, Միքիա եւ Յովէլ, Յովնան եւ Նաուամ, Ամբակում եւ Սոփոնիա. իսկ պատկերին ստորեւ կան Եսայի, Երեմիա, Եղեկիէլ, Մաղաքիա, Ջաքարիա, Արդիու եւ Անդէ մարդարէներու նկարները, որոնք ձեռքերնին դիրք մը ունին: Արծաթեայ կողքերուն երկրորդ երեսները Նոր Կտակարանէն զրուած մը կը ներկայացնեն. իսկ պատկերին եղերքը կան 12 առաքեալներու դէմքերը. իւրաքանչիւրը ունի չարչարանքի գործիքը՝ որով մարտիրոսացած է. ասոնց ալ իւրաքանչիւրին տակ զըրուած է անունը: Կողքին կեդրոնը կայ Յիսուսի նկարը (4,7×9,8 հզմդր.). հոս ալ, առաջին կողքին նման, կայ զեղեցիկ, երեք յարկանի բոլորածեւ տաճար մը, երեք յարկերն ալ սիւնադարձ, ու սիւններուն միջանկեալ՝ պատուհաններ. տաճարը կը վերջանայ կտր դմբէթով մը, որու երկու կողմերը կան աշտարակներ՝ բարձրացած տաճարին երկրորդ յարկէն: Հեռուն կը տեսնուի ուրիշ աշտարակ մը, բարձրացած դետնէն: Տաճարին առջեւ կայ Յիսուս, չընդադադնալ իր աշակերտներէն. բոլորն ալ լայն վերարկուններ հագած են. Յիսուս ձեռքերը բարձրացուցած է ու ցոյց կու տայ տաճարը, և խօսելու դիրքի մէջ է: Պատկերին ձախակողմը վերէն վար կան Պե-

տրոս, Պօղոս, Անդրէաս եւ Յակոբոս առաքեալներու դէմքերը. աջին՝ Բարդուղիմէոս, Յակոբ, Սիմոն եւ Թադէոս առաքեալները. իսկ ստորեւ՝ Թովմաս, Փիլիպպոս, Բառնարաս եւ Մատթէոս առաքեալներու դիմապիծերը:

Ճիշտ այս երկու արծաթեայ կողքերուն զարդերով է նաեւ մեր ներկայ Մաշտոցը, այն տարրերութեամբ՝ որ սա քիչ մը աւելի մեծադիր է: Այս նմանութենէն մեկնելով՝ կ'ուզենք նոյն շրջանին, նոյն տեղւոյն եւ գրեթէ նոյն տնձին վերադրել ներկայ թ. 2061 Մաշտոցին երկու արծաթեայ կողքերը, որոնք իրարու միացած են եօթը արծաթեայ չլթաներով, որոնցմէ երեքը խախտած են իրենց տեղերէն: Մաշտոցին արծաթեայ կողքերը ոչ մէկ յիշատակադրութիւն կը կրեն վրանին, մինչ վերեւ յիշուած երկուքը՝ կըռնակի կողմէն ունին արձանադրութիւններ հետեւեալ կերպով. «Երգարանս այս արեալ հայալ ընչիս իւր, զարդարեցի արծաթաւ Կեսարիա(յ) քաղաքին, անարժան ցեւոք, արծաթագործ Շահմիրին Մ. Յակոբ, թիւն Յայոց Ռձի (1671) վասն յիշելութիւն ամենա(յն) ժամ եւ դոհանալ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Երկրորդ կողքը շինուած է շուրջ քսան տարի աւելի ուշ եւ ունի հետեւեալ զրութիւնը. «Աւետարանս այս արեալ հայալ ընչիս իւր, զարդարեցի արծաթաւ Կեսարիա(յ) քաղաքին, անարժան ցեւոք, արծաթագործ Մալխասին Մ. Կարապետ, թիւն Ռձի (1691) վասն յիշողութեան ամենա(յն) ժամ եւ դոհանալ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի»: Ենթադրութիւնս աւելի կը հաստատուի՝ եթէ նկատի առնենք որ Սերաստիա զրուած ձեռադիրը շատ հեռու չէ Կեսարիայէն:

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

ՆՈՐ ՆԻԹԵՐ

ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻ ՔԷՅՕՄԻՐՃԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Ա.

ԱՆՏԻՊ ՏԱՂ ՄԸ ԱՊՐՈՅ ՉԷԼԷՊԻ ՄԱՍԻՆ

Գրչապիրներու հաւաքածոյիս մաս կազմող ժէ. դարէն Աղուեսադիրք մը ունի նաեւ հետեւեալ տաղը՝ Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի զրչէն առ Ապրոյ (Արրահամ) Չէլէպի, ժամանակուան մե-

ծաղդեցիկ եւ մեծահարուստ դործիչ հայ վաճառականը: Երեմիա Չէլէպիի այս տաղը, զոր առաջին անգամ հոս հրատարակելով մեր բանասիրութեան ուշադրութեան կ'ընծայենք, ոչ միայն անտիպ է, այլ եւ բոլորովին անծանօթ կը մնայ: Նախ տաղը հոս կը հրատարակենք, անոր կցելով ինչ ինչ անդրադարձումներ:

Էս քեզ ողջոյն ով սիրելի
Հարց ու բարեւս ընկալ եւ այլն ի կարգի,
Եւ հարցանեմ զհրամանքդ ըստուղիւ սրտի,
Բարի կեալդ յերկրի ի յայսմ աշխարհի:

Իկեսեալ աղաչեցի զո(է)րն ամենի.
Երկար ամօք պահէ ի վ(ե)ր(այ) երկրի.
Ձուարթ պայծառ տեսրդ նման է լուսնի,
Շքեղափայլ փայլեալ ի մէջ հողածնի:

Խնդրեմ յապէնիաղ ա(ստուա)ծն.
Անիործ եւ անսայթաք պահէ զքեզ յերկրի.
Դու իմ պարծանք կենացս եւ սիւն իմ սրտի
Հողոյս հողի աշացս լոյս սիրելի:

Անմահ եւ համարձակ դոչեմ ատենի.
Բարձր հըղաւր չընաղ եւ զեղդեղելի.
Ահա սիրտ իմ վառեալ ի յերկինս աւդի,
Բորբոքելով այրիմ ի մէջ վտանդի:

Ձունիմ ո'չ սիրելի, ո'չ աղդ մի բարի,
Խորհրդակից լինել բորբոքեալ սրտի.
Քեզ եմ ապաւինեալ ի յոյս ամենի
Որ նա հասուցանէ զքեզ ի տեղի:

Քեւ մեք ուրախանամք ի վ(ե)ր(այ) երկրի
Կարաւտ ի քէն անկեալ կամ ես ի մէջ տղմի
Սիրասնունդ բորբոք եւ յոյժ նազելի
Որ դաս դու շիջուցես կրակն իմ սրտի:

Ուղիղանոս ծովն թէ աստ լինի
Սրտիս մէջն կտալէն բարրութեան՝
Բարրառելով զոչեմ ի մէջ տուննի
Ասելով կեանքում* ԱՌՐԱՀԱՄ ԶԱԼԱՊԻ:

Երանեմք զքեզ այր իմ բարի.
Գեղեցեղադոյն զովել զքեզ է արժանի,
Փոքր բերան ախորժ եւ քաղցր լեզուի,
Նման Արիստոյն եւ սարկաւադի:

Ընտրեալ հանուրց մեծաց եւ պարթեւ ազգի,
Բարի ծնաւդաց պտուղ եւ դաւակ բարի,
Մաքուր յիստակ մըտաւք եւ է հրաշալի
Յոր եւ կոչի անուամբ ԱՌՐԱՀԱՄ ԶԱԼԱՊԻ:

Նորազուարճ յատկերդ է յոյժ զարմանալի,
Փառք եւ զոհութիւն(ւն) քո ստեղծաւորի,
Նման կարմիր վարդի ի դէմ պուլպուլի,
Անզաւար կանչէ դէմ առաւօտի:

Կամակից լինէիր դու իմոյ սրտի,
Ելեալ գիմեալ զայիր դու յայսմ տեղի,
Աչքս միտքս սիրտս ի քեզ անձկալի,
Միթէ տ(է)րն տացէ հասնիմ մութրատի:

Արդ բարեխաւս ս(ուր)ր տիրուհի
Եւ պաղատեա քո միածնի
Պահէ անխորժ ամէն չարի
Եւ առաւել ի մէջ կռուի:

Լիցիս անխորժ յերկար ամի
Նախըդ արդար եւ է բարի
Ղարկալութե(ան) օտար երկրի
Պահէ զքեզ աջն յի(սուսի):

Աւ(ր)հնու(թ)ի(ւն) Ա(ստուծո)յ ի քէն ոչ պակասի,
Հիմըդ հաստատ կենա ի վ(ե)ր(այ) երկրի
Զինչ խնդրես յԱ(ստուծո)յ՝ հաղար տա քեզի,
Ինչպ(է)ս որ սիրտն քո ո(ր)պ(էս) եւ կամի:

Բարեհամբաւ եղբայր սիրուն սիրելի.
Գովեալ ես ի յերկնի ի վ(ե)ր(այ) յերկրի
Այլ եւ ամ(էն) ազգն ի քէն սասանի.
Անկեալ եւ խորտակեալ չարքն կորընչի:

*) Թրքերէն աչքս:

Բարունապետն Յ(իսու)ս առ տէրն ամենի.
Տ(է)րունական հրամայէ յաւատարանի.
Ողորմածացն ասէ՝ թէ՛ ձեզ երանի.
Տ(է)րն պահէ զհրամանքդ եւ մեզ ողորմի:

Արիւստիայլ լուսով զարդարեալ ես իլի,
Լի չնորհաւք ես յցեալ եւ եաւթնարիւնի
Պերճապատիւ պանծացեալ, փառաւք եւ փայլի
Բարձրաթուիչ եղբայր նման արծուի:

Աման մատաթ զոչեմ ես յիմ թալեհի.
Ուր է մարդն որ տա ինձ պատասխանի.
Ելար զնացիր զարիպ ի տար աշխարհի.
Պանդուխտ թողեր զդերիս ի յայսմ տեղի:

Միթէ ճարակ լինէր որ ես երթայի.
Փաւստ մի կռնակս բորիկ ապտալի կերպի,
Լինէր թէ կարէի տեսնել զտեսըդ քոյին
Փառք տայի փառաց տ(եառն) եւ Հօրն անեղի:


Զունիմ դադար սրտիս համբեր սակաւ մի.
Լսէ զզանկատ սրտիս որ քեզ է յայտնի,
Իմ պատուական հղաւր եւ հողոյս հողի,
Կայտառ տեսեամբ, ահեզ եւ ահն ամենի:

Էնն Ա(ստուծա)ծ պահէ ըղբեզ թաղ պարծանք ինձի,
Լիարար բարձրաձայն եւ քաղցր լեզուի.
Բուրաստան ծաղկաւէտ կարմիր վարդենի.
Զոր բուրիս հանապաղ ի հոտ անուշի:

Լոյս տուր սրտիս աչացն, եւ տ(է)ր իմ բարի
Քեզ եմ ապաւինեալ Ա(ստուծա)ծ ամենի,
Բարեգութ ողորմած անեղանիլի.
Միթէ լսէ դթա իւրոյ ծառայի:

Եւ թէ ասեմք իրատ չէ պարտ մեզ իսկի.
Դու իմաստուն խիկար եւ հանճարով լի.
Ծաղեա պայծառ արեւդ մթացեալ երկրի.
Բարով զարդարեալ դաս ի յայսմ տեղի:

Պատըսպարեալ լիցին ս(ուր)բն ամ(ենայն)ի.
Եւս առաւել բազուկն եւ աջն անեղի.
Գեղեցեղադոյն զովեալ հղաւր անուանի,
Մեծն իշխան պայծառ հետեւդ զքեզի:



Ի քէն հայցեմ, եղբայր, յոյժ աղերսալի.
Եւ պաղատիմ, եղբայր, բոլորով սրտի.
Ձմեր խաւսքն անտես չառնել սաղմոսի բանի.
Ձի իմաստու(թ)ի(ւն) յելս ճանապարհաց զովի:

Տուներու սկզբնատառերը կը կազմեն
ԵՒ ԽԱԶ ՔՈ Ե ԸՆԿԱԼ ԱՅՐԱՍՄ ՁԷԼԵՊԻ:

Հաւաքածոյիս Աղուեսաղիւրքը, որուն
էջ 18թէն մինչեւ 21ա կը գրաւէ տաղս,
փոքրածալ է եւ կը բաղկանայ 80 թերթե-
րէ, թղթեայ, եւ ներկայիս ունի ԺԹ.
զարու խաւաքարտ կիսակաշի կազմ: Տա-
րակոյս չկայ որ Ժէ. դարէն զրջութիւն
է, եւ ունի խոշոր ու մանր թէ՛ բոլորովի
եւ թէ նոտրովի մասեր: Ներկայիս չունի
յիշատակութիւն եւ էջ 80ա վարի լուս-
անցքին վրայ երեք տողէ յիշատակութիւն
մը՝ բոլորովին սրբուած է: Հետաքրքրա-
կան որ վերի տաղս՝ մանր պատմութեամբ
ներու մէջ՝ այսպէս անխորազիր եւ բո-
լորովին անտեղի կերպով օրինակուեր է:
Գրչադրին ետեւը երկու փոքր շարք Հայ-
րեն (Քուչակեան) քառեակներ կան: Ձեմ
զիտեր թէ կարելի՞ է արդեօք Երեմիա
Քէօմիւրճեանի իսկական զրջութիւնը նը-
կատել այս Աղուեսաղիւրքը: Այլապէս
ի՞նչպէս բացատրել Ապրոյ (Արբաճամ)
Ձէլէպի ձօնուած միակ տաղի մը զո-
լութիւնը՝ զուարճալի եւ խրատական
մանրամասներու այս Աղուեսաղիւրքին մէջ:

Որեւէ տարակոյս կարելի չէ ունենալ,
որ վերեւ մեր հրատարակած այս տաղը
Երեմիա Ձէլէպի զրջէն է: Տաղին լե-
զուն եւ ձօնուած անձը ատիկա կը հաս-
տատեն: Երեմիա Ապրոյի նուիրումը ու-

րիչ տաղ ալ ունի, զոր հրատարակած է
լուսահոգի ողբացեալ բարեկամս Մեսրոպ
Պատրիարք Երուսաղէմի Նշանեան, իր
խիստ արժէքաւոր ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ Երե-
միա Ձէլէպի Քէօմիւրճեանի զործին մէջ
(Երուսաղէմ, 1939, էջ 559, 564, 566,
589, 605):

Երեմիա Քէօմիւրճեան, որ այնքան դո-
վասանքով կը գրէր Ապրոյ Ձէլէպի մա-
սին անոր կենդանութեան ատեն, գրած է
խիստ անարդարից նամակ մը Ապրոյի
մասին՝ անոր մահուընէ ետք՝ տա Եղիա-
զար կաթողիկոս, նոյնպէս հրատարակ-
ուած Նշանեան Սրբազանէ (էջ 408): Նա-
մակը, ամէն պարագայի տակ, նպաստա-
ւոր տպաւորութիւն մը չ'ընէր ընթերցո-
ղին վրայ՝ Երեմիա Քէօմիւրճեանի նկա-
րողքին մասին:

Բ.

ԵՐԵՄԻԱ ՔԷՕՄԻՒՐՃԵԱՆԷ ԱՆՏԻՊ ՏԱՂ

1678-1681ին, Կ. Պոլիս, Յովհաննէս
զրջէ, Պուրսացի մահտեսի Յակոբի որդի
Տիրացու Մանուկին համար զրուած ճօխ
եւ ընտիր նոտր զրջութեամբ Տաղարանին
մէջ, որ զրչադրներու իմ հաւաքածոյիս
մաս կը կազմէ, էջ 33ա, կայ հետեւեալ
տաղը ցարդ անտիպ, որուն խորագիրն է
կարմրաւ, զրջէն.

Գովեստ առ ս(ուր)բ Ա(ստուա)ծածին ասացեալ Երեմիայի բանասիրէ.

Երանեալ կոյս ս(ուր)բ Տալիթայ Մարիամ,
Ըսուհի փաք վէ ուրուքեարի սուլթան,
Փրկչին մերոյ տուն եւ տեղի բնակութեան.
Պէնիմ արդըմ սանայ սուլտում Մէրիէմ:

Բարունքն Բանն որ էր ծոց հաւր յառաջմէ.
Նուր իտի հէմ նուրտան տողմիչ աւլ կեօկտէ.
Նա հաճեցաւ առնուլ մարմին ի քէնէ,
Ճէպրայէլի սալտի սանայ մուճաէյէ:

Եկեալ հրեշտակ տայր զաւետիս ողջունի.
Սանայ մուճաէ չալ օլ քըլլար սուլթանի.
Ի քեզ իջէ ամենազաւր սուրբ Հոգի,
Ղուլէթ ուլլահ ուստունէ սէյիւն քիպի:

Մաքուր հոգոյդ մաքուր հոգին իջանի.
Նուրի թախիս սանայ էնուպ հէլլ օլտի.
Անմայր ծընեալ անժամանակ Հաւր ծոցի,
Պու կիւն կէլուպ սէնտէն աթաւըլ տողտի:

Իսկուհի կոյս ծընունդ քո ս(ուր)բ եւ սըխրալի.
Արի քըլ սէն թանկըմըն վալիտէսի,
Ծառ կենաց դու ծաղիկ անթառամելի,
Պիքըրու արի տողտուն մըսի՛ ուլլահի:

Արդ սըրբուհի դեզ ո'ր լեզու դրուատէ,
Փունդար օլտուն զուտու ապիհայաթէ,
Ձղեղեցկաչէն տաճարդ լուսոյ ո'վ զովէ,
Հուրմուղ իքէն օլտուն լալ ու կէվհէրէ:

Յարկ զերարիւն ա(ստուա)ծընկալ դու խորան,
Նէ մուպարէք իամին սէնին Մէրիէմ,
Սափոր ոսկի լըցեալ ի քեզ մանանայն,
Պէյթուլլահ սէն նուրտան մէհրապ Մէրիէմ:

Ի քեզ նայիմք ծնող անեղիդ մայր սուրբ կոյս,
Մուրվէթ քեանի ճէմիմիզէ սէն ումուզ,
Լեր բարեխաւս առ քո որդին տ(է)ր Յ(խուս)ս,
Ձիքըմ զապուլէյլէ նիազ հէր ուղ:

Է հայրք ւ եղբայրք իդմ ոչ յարգել յայսմանէ,
Քի սիւլլէրիմ քարարմտան զիյատէ,
Անմեղադիր լինել հայցեմ զիյատէ,
Սիղէ յէսիր Քեմիւրճի զատէ:

Տաղին սկզբնատառերը կը կապեն Ե-
ՐԵՄԻԱՅԻ Է: Իսկ վերջին տողը կը կրէ
իր ստորագրութիւնը Քեմիւրճի ՁԱՏԷ,
այսինքն Քէ(Օ)ՄԻՒՐՃԵԱՆ: Ան ուրիշ
տաղեր ալ գրած է, նոյնիսկ բոլորովին
թուրքերէն լեզուով:

Գ.

ԵՐԵՄԻԱ ՁԷԼԵՊԻ ՔԷՕՄԻՒՐՃԵԱՆԻ
ԻՆՔԵՍԱԳԻՐ ՆԱՐԵԿԻ ԳՐԶԱԳԻՐԸ

Հաւաքածոյիս սիրուն զրչադրներէն
մէկն է ատիկա, ոսկեղբուրդ կաշեպատ

տախտակ, ներսէն կարմիր մետաքսալա-
թով (աթլաս) պատած, թղթեայ (եւրո-
պական), միասին (աջին երկդիւծ եւ ձա-
խին միագլիծ կարմրաւ ուղազեալ սահ-
մանաւորում), մաքուր նոտրովի, ծաղ-
կեալ: Ունի ընտիր խորան եւ զրչադրին
էջ 7թ խաչելութեան մանրանկարը: Խա-
չին վերտառութիւնը լատիներէն: Խա-
չին երկու կողմը կանգնած Մարիամ Աս-
տուածածին եւ Յովհաննէս, իսկ խաչին
ոտքին՝ ծնրադիր, բաղկատարած, թեթեւ
սեւամօրուտով եկեղեցական մը (Նարեկ-
կացին հաւանաբար, քանի որ Երեմիա

Թուրքերուն պարտութեամբ վերջացաւ, ծայր տալով հետզհետէ Օսմանեան կոչումը կայսրութեան անհաստատ եւ աւագակարարոյ կառուցուածքին փլուզումին:

Երեմիա Քէօմիւրճեան կուտայ նաեւ հիշքէի 1104 թուականը, որ կը սկսի 1692 Սեպտեմբեր 12ին:

է) Էջ 259ա. Երկրորդ յիշատակարան, զրչէն. «Աղօթք ս(ր)բ(ո)յ հօրն յոհան զաննեցուն ասացեալ է»: Կը սկսի կարմրաւ, երեք տող «Աղաչեմք զձեզ. տ(է)ր Ա(ստուա)ծ...». Կ'աւարտի էջ 259բ, որուն ներքեւ նոյն զրչէն ութը տող՝ կայ զրութիւնս. «Ամենապ(այօծառ. զերափայլ սրբ(ա)զան եւ Երջանիկ ա(ստուա)ծարեալ Հայրապետ սրբ(ո)յ զահին Սըսայ աթոռոյ սրբանեալ արիական հոփի տ(եա)ռն Եղեալ(ա)ր Կաթող(իկ)ոսի ս(ր)բ(ո)յ մատա(մ)բ զրաց զայս աղօթքս մեր խնդր(ո)յ յամի տ(եա)ռն 1771 սեպտ(եմ)բեր 16»:

Եղիազար Կաթողիկոս մը Սսոյ աթոռին վրայ առ հասարակ չի յիշուի: Պատմաճեան Գրիգոր Պատրիարքի Յիշատակարանին մէջ կը յիշուի որ «1772 թուականին՝ Եփրեմ (Ա. Աջապահեան) կաթողիկոս եղաւ Սսոյ Աթոռին. եւ այս միջոցին Աջապահեան Եղիազար Եպիսկոպոս՝ իւրովի կաթողիկոս եղաւ յանկեան ուրեք եւ Սասմալով եկաւ իր կաթողիկոսութիւնը հաստատել տալու համար, երբ արդէն կաթողիկոս եղած էր Եփրեմ»:

Իրականութիւնը սա է որ Եփրեմի Կաթողիկոս ընտրուելու եւ օծուելու թուականը որոշ չէ, եւ ոչ մէկ տեղ կը հանդիպինք կարեւոր թուականին եւ զործողութեան մանրամասնութեան: Օրմանեան առանց ապացոյցի 1771 նշանակած է: Սակայն Պատմաճեան Գրիգոր Պատրիարք,

ինչպէս տեսանք, 1772ին կը նշանակէ զայն կաթողիկոս: Արդ մեր յիշատակարանը, որ վերը տուինք, Եղիազարը Կաթողիկոս Սսոյ կը նկատէ արդէն 1771 Սեպտեմբեր 16ին: Անմեկնելի է թէ ինչպէս կարելի է Կաթողիկոս ընտրուիլ եւ օծուիլ «յանկեան ուրեք»: Անյայտ է թէ ինչպէս վերջացաւ Եղիազարի կաթողիկոսութիւնը, կամ ե՛րբ մեռաւ ան: Կ'երեւի թէ Եղիազարի եւ Եփրեմի կուսակցութեանց միջեւ բռնան պայքար մղուեցաւ, որուն համար Գրիգոր Պատմաճեան Պատրիարքը կը զրէ որ «Այս պատճառաւ շատ նեղութիւն եղաւ թէ ժողովուրդին եւ թէ մեղի» (էջ 22):

Վերեւ մեր առած յիշատակարանը որոշ կերպով Կաթողիկոս կը ներկայացնէ Եղիազարը, առանց որեւէ կասկած տալու անոր կաթողիկոսութեան մասին: Ընթերցողը կը ստանայ այն տպաւորութիւնը՝ որ Եղիազարի կաթողիկոսութիւնը պայքարի խնդիր չէ: Պատմաճեան, սակայն, կը պնդէ որ «Եփրեմն էր օրինաւոր կաթողիկոս»:

Յաւելուածական վկայութեանց եւ պրպտութեան կարիք կայ՝ լուսարանելու համար այս մութ պարագան: Վերջովմունք տեղի ունեցեր է Եղիազարի ընտրութեան պատճառաւ, եւ Սսոյ թեմին ժողովուրդը Պօղոսեան եւ Ապօղոսեան կուսակցական հատուածումներով իրարու դէմ ելած են:

Գրչագիրը գնեցի, հաւաքածոյիս համար, ի Կ. Պոլիս, հանդուցեալ Տիար Երուանդ Այեանաքէ, որ թղթատարով ինծի ուղարկեց:

(Շար. 1)

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

(Իեհիկ Եսայու Թումանեանի «Առնեմ տումարացոյց»ի մասին)

«Առնեմ տումարացոյց»ը¹ փոքրիկ հատոր մըն է, 66 էջերով, ուր Թումանեան պարզ ոճով կը բացատրէ հռոմէական, հայկական Մեծ ու Փոքր, Աղարիայի եւ Հիւրայի թուականները. կուտայ անոնց զուգընթացութեան ցանկերը՝ մեր քրիստոնէական թուականին հետ. կան աղիւսակներ՝ իւրաքանչիւր թուականի համար, որպէսզի ուսումնասէրները կարենան ճշտել որեւէ տուեալ տարիի ամսանախարհագրական տեղանքը շարժումն թիւերուն համապատասխանող շարժումն օրերը. զիւրքին վերջին էջերն ալ յատկացուցած է լուսնի ծնունդը եւ աւագ լրումը զանելու կանոններուն:

Գրեքին առաջին մասն է, որ մեզ առաւելագոյն կը հետաքրքրէ, որովհետեւ հայկական բանասիրութեամբ զբաղողնեւ, Թումանեանին այս ձեռնարկին մէջ կը ըլլ, որոնց իրենց ամենամտերիմ բարեկամը, զորուն ստէպ պիտի դիմեն «պատմադրական բաղձաթիւ հարցերի լուսարանման ժամանակ», որպէսզի կարենան «վերլուծել զանազան տուեալներ, ճշտել զրանց ժամանակը, իմանալ շարժումն օրը...»:

Այս նպատակին հասնելու համար, Թումանեան պատրաստած է Ա) Աղիւսակ մը՝ զանելու համար հռոմէական կամ քրիստոնէական միջնադարին թուականի ամսաթիւերուն համապատասխանող շարժումն (կիրակի, երկուշաբթի, երեքշաբթի...) օրերը (էջ 11-12): Բ) Հայկական եւ հռոմէական թուականներու զուգընթացութիւններու ցանկը (էջ 15-30), որ կը սկսի հայկական Ա. տարւան Նասարդ 1-ի զիմաց զնելով քրիստոնէական 11-07-552 թուականը, եւ կը վեր-

ջանայ հայկական ՌՆԾ = 1450 տարիով, որու զիմաց կը զտնենք հին տոմարի 14-07-2000ը եւ նոր տոմարի 27-07-2000 տարին: Գ) Աղիւսակ՝ հայկական Մեծ թուականի շարժումն օրերը զանելու (էջ 33-34): Դ) Աղիւսակ՝ հայկական Փոքր թուականի օրերը զանելու (էջ 36-37): 5) Աղիւսակ՝ Աղարիա Զուգայեցիի տոմարին շարժումն օրերուն համար (էջ 38-39):

Թումանեանի այս աշխատասիրութիւնը պտուղն է, հայկական թուականի նկատմամբ մեր ունեցած աւանդական ծանօթութիւններուն, որոնց ինք յստակ դիժեր տուած է, եւ զանոնք ամփոփած է զանազան ցանկերու եւ աղիւսակներու մէջ: Այս զան ցանկերու եւ աղիւսակներու մէջ: Այս զան ցանկերուն ներդրումութեան զիմելով, պիտի ուզէինք տոմարագէտներու ուշադրութիւնը հրաւիրել քանի մը կէտերու շուրջ:

Ա.

ՀԱՅԿԱԿԱՆ

ՄԵԾ ՈՒ ՓՈՔՐ ԹՈՒԱԿԱՆԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՒ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԱՂԻՒՍԱԿՆԵՐԸ

Պրօֆ. Ա. Արքայապետ, «Շիրակացու մատենագրութիւնը»² զործին մէջ հրատարակած է հայոց Մեծ թուականի 532 տարիներուն կանոնները, իսկ «Յուլահանէս իմաստասէրի մատենագրութիւնը»

1. ՀՍՍՌ ԳԱՀ Զրտ. երեւան, 1965, էջ 66:

2. Հրտ. երեւան, 1944, էջ 263-282: